ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ՝ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը**
   Մխիթար Հայրապետյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ սփյուռքի նախարար
3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Սիրիայի Արաբական Հանրապետություն, Լիբանանի Հանրապետություն, Եգիպտոսի Արաբական Հանրապետություն ս. թ. սեպտեմբերի 20-28-ը
4. **Հրավիրող կողմը**
   - Սիրիայի Արաբական Հանրապետությունում և Լիբանանի Հանրապետությունում ՀՀ դեսպանություններ,
   - Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար տիկին Նաբիլա Մաքրամ
5. **Գործուղման նպատակը**
   Սիրիայի Արաբական Հանրապետություն, Լիբանանի Հանրապետություն աշխատանքային և Եգիպտոսի Արաբական Հանրապետություն պաշտոնական այցերի արդյունքում ակնկալվում է.
   - տեղում ծանոթանալ Սիրիայի հայ համայնքի ներկա վիճակին, պատերազմի ընթացքում կրած վնասներին և առկա մարտահրավերներին,
   - տեղում ծանոթանալ Լիբանանի և Եգիպտոսի հայ համայնքների ներկա վիճակին և առկա մարտահրավերներին,
   - ներկա գտնվել հայ համայնքներում ՀՀ անկախության առթիվ կազմակերպված տոնակատարություններին,
   - հանդիպումներ ունենալ սիրիահայ, լիբանանահայ և եգիպտահայ հոգևոր, համայնքային կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների հետ,
   - գործնական քայլեր ձեռնարկել նշված համայնքների հետ կապերի էլ ավելի ամրապնդման և ակտիվացման՝ Հայրենիք-Սփյուռք կապերի զարգացման ուղղությամբ՝ ոչ միջնորդավորված և անմիջական շփման միջոցով տեղում ծանոթանալով ստեղծված իրավիճակին, համայնքային խնդիրներին և շեշտադրելով հայրենի պետության կողմից՝ ոչ միայն հոգեբանորեն, այլև

ֆիզիկապես (պատասխանատու գերատեսչության ղեկավարի մակարդակով) հայ համայնքների կողքին մշտապես լինելու հանգամանքը,

- բարձրացնել Սիրիայի հայ համայնքի բարոյահոգեբանական վիճակը,
- տեղայնացնել Սփյուռքի նախարարության առաջիկա ծրագրերը,
- ակտիվացնել նշված հայ համայնքների ներուժի մասնակցությունը համահայկական նշանակության խնդիրների կարգավորման, ՀՀ և Արցախի զարգացման գործում,
- հանդիպել Եգիպտոսի Արաբական Հանրապետության վարչապետ Մուստաֆա Մադբուլի հետ,
- հանդիպել Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի հետ,
- ամրապնդել և ակտիվացնել հայ-եգիպտական երկկողմ հարաբերությունները՝ ի նպաստ տեղի եգիպտահայ համայնքի շահերի,
- մասնակցել եգիպտահայ համայնքի մեծարմանը նվիրված միջոցառմանը,
- ընդլայնել մի քանի միլիոնի հասնող սփյուռք ունեցող երկու երկրների համապատասխան գերատեսչությունների՝ Սփյուռքի նախարարության և Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարարության միջև փոխադարձ համագործակցության շրջանակները,
- Եգիպտոս-Կիպրոս-Հունաստան սփյուռքի հարցերով արդեն իսկ գոյություն ունեցող համագործակցության ձևաչափին ներգրավել հայաստանյան կողմին:

6. Քննարկման թեմաները

- Սիրիայի, Լիբանանի և Եգիպտոսի հայ համայնքների կարիքների և առկա մարտահրավերների վերհանում և վերջիններիս հայրենի պետության կողմից աջակցության տրամադրման հնարավորությունների հստակեցում,
- համահայկական նշանակության խնդիրների կարգավորման, ՀՀ և Արցախի զարգացման գործում հայ համայնքների ներուժի մասնակցության ավելացում,
- Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդում,
- Սփյուռքի նախարարության ծրագրերի ներկայացում,
- հոգևոր կառույցների և համահայկական ու համայնքային կազմակերպությունների հետ համագործակցության ուղիների նախանշում,
- Հայաստանում զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրների և Հայաստանում լիբանանյան փորձի ներդրման հնարավորությունների քննարկում,
- հայ-եգիպտական երկկողմ հարաբերությունների ակտիվացում, Սփյուռքի նախարարության և Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարարության միջև փոխադարձ համագործակցության շրջանակների ընդլայնում, Եգիպտոս-Կիպրոս-Հունաստան սփյուռքի հարցերով արդեն իսկ

գոյություն ունեցող համագործակցության ձևաչափին հայաստանյան կողմի ներգրավում:

7. **Հանդիպումները, ելույթները, հարցազրույցները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպումներ՝

- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Արմաշ եպս. Նալբանդյանի հետ,
- Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց եկեղեցու Դամասկոսի թեմի առաջնորդ Արհ. Տ. Հովսեփ եպս. Առնաությանի հետ,
- ՍԱՀ Ժողովրդական ժողովի պատգամավոր, ցեղասպանագետ, Դամասկոսի պետական համալսարանի դասախոս, Արաբ գրողների միության անդամ և Սիրիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ դոկտոր Նորա Արիսյանի հետ,
- Դամասկոսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ,
- Հալեպի նահանգապետ Հուսեյին Դիաբի հետ,
- Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Բերիո Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Շահան արքեպիսկոպոս Սարգիսյանի հետ,
- Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Եկեղեցու Բերիո թեմի առաջնորդ Արժանապատիվ Տեր Պետրոս արքեպիսկոպոս Միրիաթյանի հետ,
- Սիրիայի Հայ Ավետարանական եկեղեցիների միության նախագահ Վերապատվելի Հարություն Սելիմյանի հետ,
- ՀՅԴ Սիրիայի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Կարապետ Յուզբաշյանի հետ,
- ՍԴՀԿ Գերագույն մարմնի ներկայացուցիչ Ավետիս Խոշաֆյանի հետ,
- ՌԱԿ Հյուսիսային Սիրիայի Շրջանային վարչության ատենապետ Կարապետ Շուշանյանի հետ,
- ՀԲԸՄ Սիրիայի Շրջանակային հանձնաժողովի, ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղի ատենապետ Ներսես Ներսոյանի հետ,
- Սիրիայի օգնության խաչի Շրջանային վարչության ատենապետուհի Հռիփ Գանանյանի հետ,
- ՍԱՀ Ժողովրդական ժողովի պատգամավոր Ժիրայր Ռեիսյանի հետ,
- «Գանձասար» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Զարմիկ Չիլաբոշեան-Պողիկեանի հետ,
- «Ռադիո Երազ» ռադիոկայանի պատասխանատու Ռուբեն Գևորգյանի հետ:
- Հալեպի հայ համայնքի ներկայացուցիչների հետ,
- ՍԱՀ Ժողովրդական Ժողովի սիրիացի երեսփոխանների հետ,

- Այնճարի քաղաքապետ Վարդգես Խոշյանի հետ,
- Այնճարի հայ համայնքի ներկայացուցիչների հետ,
- Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հետ,
- Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության Կենտրոնական մարմնի ատենապետ, Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոսթյանի հետ,
- Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց կաթողիկոս-պատրիարք Ամենապատիվ և Գերերջանիկ Տ.Տ. Գրիգոր Պետրոս Ի Կապրոյանի հետ,
- Լիբանանի ՀՅԴ կուսակցության ղեկավար կազմի հետ՝ Լիբանանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր, ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հակոբ Բագրատունու գլխավորությամբ (պատվիրակության կազմում էին նաև Կենտրոնական կոմիտեի անդամներ Հակոբ Հավաթյանը, Վիգեն Ավագյանը և Ջորջ Սապունճյանը),
- Լիբանանի ՍԴՀԿ-ի ղեկավար կազմի հետ՝ ՍԴՀԿ Լիբանանի Շրջանային վարիչ մարմնի ատենապետ Սեպուհ Կալփակյանի գլխավորությամբ (ՍԴՀԿ Կենտրոնական վարչության անդամ Ալեքսան Քեօշկերյանի ուղեկցությամբ),
- Լիբանանի ՌԱԿ-ի ղեկավար կազմի հետ՝ ՌԱԿ Կենտրոնական վարչության համաշխարհային կենտրոնական վարչության ատենադպիր, «Զարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սևակ Հակոբյանի գլխավորությամբ (ՌԱԿ Լիբանանի շրջանային Վարչության պատվիրակության կազմում էին դոկտոր Հակոբ Փափազյանը, Արա Թերզյանը և Արա Գոյունյանը),
- ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային վարչության ղեկավար կազմի հետ՝ ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային վարչության ատենապետ Ժերար Թուֆենքճյանի գլխավորությամբ:
- Լիբանանի հայ համայնքի կրթական և մշակութային կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների, համայնքային գործիչների և լիբանանահայ գործարարների հետ,
- Լիբանանի զբոսաշրջության նախարար Ավետիս Կիտանյանի հետ,
- Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեանի հետ,
- Լիբանանի Ազգային վարչության անդամների և Ազգային Միացյալ Վարժարանի խորհրդի կազմի հետ,
- Հայկազյան համալսարանի նախագահ Վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոսթյանի, համալսարանի «Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի» տնօրեն, «Հայկազյան» հայագիտական հանդեսի պատասխանատու

գլխավոր խմբագիր Անդրանիկ Դաքեսյանի, ինչպես նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

- Եգիպտոսի Արաբական Հանրապետության վարչապետ Մուստաֆա Մադբուլի հետ,
- Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի հետ,
- Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ եպ. Մնացականյանի հետ,
- Կահիրեի հայ համայնքի ներկայացուցիչների հետ,
- Եգիպտոսի ռազմածովային ուժերի հրամանատարի և Ալեքսանդրիայի քաղաքապետ Դոկտոր Աբդ Էլ Ազիզ Քոնսոուի հետ,
- Ալեքսանդրիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ,
- Եգիպտոսի հունական համայնքի ղեկավար Քրիստոս Կավալլիսի հետ:

Ելույթներ՝

- Դամասկոսի Հայոց Թեմի Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում Դամասկոսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ,
- Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսությունում Հայաստանի երրորդ Հանրապետության անկախության 27-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված պաշտոնական ընդունելության ժամանակ,
- Այնճարի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ,
- Լիբանանում ՀՀ դեսպանությունում Լիբանանի հայ համայնքի կրթական և մշակութային կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների, համայնքային գործիչների և լիբանանահայ գործարարների հետ հանդիպման ժամանակ,
- Հայկազյան համալսարանի ուսանողների հետ հանդիպման ժամանակ,
- Կահիրեի «Պըլըկտանյան» սրահում Կահիրեի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ,
- Կահիրեի պետական թատրոնում Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի անմիջական աջակցությամբ նախաձեռնված՝ եգիպտահայերի մեծարմանը նվիրված միջոցառման ժամանակ,
- Ալեքսանդրիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ:

Հարցազրույցներ՝

- Սիրիայի ՍԱՆԱ պետական լրատվական գործակալությանը,
- սիրիական մասնավոր SamaTV-ին, սիրիացի հայտնի լրագրող Քինանա Ալուշին,
- Բերիո Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի պաշտոնաթերթ «Գանձասար»-ին,
- «Ռադիո Երազ» ռադիոկայանին,

- Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը (Հ1-ին)
- «Արմենիա TV»-ին,
- Եգիպտոսի DMC առաջատար հեռուստաալիքի հանրահայտ լրագրող Ուսամա Քամելին,
- MBC Եգիպտոսին,
- Exstra News Եգիպտոսին,
- Եգիպտական Ալ-Ալամ լրատվականին,
- Եգիպտական մի շարք այլ լրատվամիջոցներին:

Բարձրացված կամ քննարկված հարցեր՝

- **Դամասկոսի և Հալեպի հայ համայնքների կողմից բարձրացված հարցեր.**
  - Արևմտահայերենի պահպանության հարցը,
  - Բացառել օտարալեզու բառերի և եզրույթների գործածությունը հայերենում,
  - Պատրաստել և համայնքներում տարածել Հայաստանի մասին պատմող արևմտահայերեն տեսահոլովակներ և նյութեր,
  - Հստակեցնել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ Հայաստանի նոր կառավարության մոտեցումները,
  - Ակտիվացնել երկու երկրների խորհրդարանական խմբերի միջև կապերը և փոխայցելությունները,
  - Փոխել Հայրենիք-Սփյուռք համաժողովների ձևաչափը՝ դարձնելով դրանք առավել գործնական:
- **Այնճարի հայ համայնքի կողմից բարձրացված հարցեր.**
  - Արևմտահայերենով հաղորդումների պակասը,
  - Լիբանանում ՀՀ դեսպանության կողմից այնճարցիներին տրամադրվող հյուպատոսական ծառայությունների առավել հասանելիության հարցը. դիմումների համար Այնճարից մեկնում են Բեյրութ:
- **Լիբանանում գործող ավանդական երեք կուսակցությունների և ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային վարչության ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցեր.**
  - Համագործակցության ակտիվացում հատկապես կրթական, մշակութային, զբոսաշրջության, առողջապահության ոլորտներում,
  - Սփյուռք-Սփյուռք կապերի ակտիվացում, քանի որ տարբեր տարածաշրջանների սփյուռքներն իրար այդքան էլ լավ չեն ճանաչում,
  - Համայնք Հայաստանից ավելի մեծ թվով բանախոսների և դասախոսների գործուղման հնարավորությունների ավելացում,
  - Մամուլով և հեռուստատեսությամբ ոչ թե միայն առանձին անհատների, այլև համայնքային խոշոր և ակտիվ կառույցների գործունեության ներկայացում,

- Հայաստանի հանրային հեռուստաընկերության (Հ1-ի) ներկայացուցչության հիմնում Լիբանանում,
- Հայաստանի ԲՈՒՀ-երում անվճար ուսանելու հնարավորությունների ընդլայնում լիբանանահայ երիտասարդների համար՝ հատկապես բնագիտական առարկաների գծով,
- Գոնե տարին մեկ անգամ սփյուռքին միավորող միջոցառումների կազմակերպում հայրենիքում,
- Հայաստանի նոր կառավարության տնտեսական քաղաքականության հստակեցում,
- Հայաստանում սոցիալ-տնտեսական հարցերի՝ բնակչության բարեկեցության մակարդակի, միջին աշխատավարձերի, հարկային քաղաքականության վերանայում,
- Փոքր և միջին բիզնեսի քաջալերում,
- Հայաստանում հաստատված և հաջողություններ գրանցած սփյուռքահայ անհատների մասին հաղորդումների պատրաստում, հարցազրույցների կազմակերպում, դրանց տարածում հայ համայնքներում,
- Երևան-Բեյրութ-Երևան ավիաչվերթի գների վերանայում, դրանց նվազեցման հնարավորությունների քննարկում:

- **Բեյրութի Ազգային Միացյալ Վարժարանի տնօրինության կողմից բարձրացված հարցեր.**
  - Արևմտահայերենի պահպանության հարցը,
  - Բարձր դասարանների աշակերտների փոխայցելությունների կազմակերպում,
  - ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցության շրջանակների ընդլայնում՝ նախարարության պատասխանատուների աշխատանքային այցերի կազմակերպում, փորձի փոխանակում, ուսումնական խորհրդի հետ աշխատանքների ակտիվացում,
  - Արևմտահայերեն դասագրքերի կազմման աշխատանքների իրականացում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ,
  - Նախադպրոցական տարիքի երեխաների համար ռիթմիկ շարժումների խաղալիքներով ապահովում,
  - Ֆիզիկական կրթության մասնագետի ապահովում,
  - Արևմտահայերենով այբբենարանի պատրաստում,
  - Հայագիտական առարկաներով գրքերի արդիականացման և թարմացման հարցը,
  - Մանկավարժական մեթոդաբանության գծով վերապատրաստումների կազմակերպում:

- **Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ համայնքների կողմից բարձրացված հարցեր.**
  - Համայնքի ծերացում,
  - Արևմտահայերենի պահպանության հարցը,
  - Արևմտահայերենի պահպանության հարցերով զբաղվող կառույցի ստեղծման անհրաժեշտություն,
  - Արևմտահայերեն դասագրքերի գրքերի կազմում և տեղայնացում համայնքում,
  - Հայոց պատմության արևմտահայերեն դասագրքերի նոր խմբագրությունների բացակայություն,
  - Հայկական ռադիոյի հեռարձակման հաճախականության խնդիր (ամենօրյա հեռարձակման փոխարեն՝ շաբաթական մեկ ժամ):
- **Եգիպտոսի հունական համայնքի ղեկավարի հետ հանդիպման ընթացքում բարձրացված հարցեր.**
  - Եգիպտոսի հայկական և հունական համայնքներում առկա է երիտասարդությանը համայնքում պահելու խնդիրը,
  - Եգիպտոսում բնակվող հայ և հույն երիտասարդների փոխադարձ շփման հնարավորությունների ստեղծում՝ թեկուզ դպրոցների և ակումբների մակարդակով,
  - Եգիպտոսի հայկական և հունական համայնքներ փոխայցելությունների կազմակերպում,
  - Խառնամուսնությունների թվի աճ:

Սեպտեմբերի 20, 2018թ.
Ժամանում Սիրիա, Դամասկոս

- Սիրիա կատարած երկօրյա աշխատանքային այցի շրջանակներում Սփյուռքի նախարարության պատվիրակությունը (որի կազմում էին Սփյուռքի նախարարի օգնական Լուսին Վանա Կարապետը և Սփյուռքի նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչության պետ Լևոն Անտոնյանը) ս.թ. սեպտեմբերի 20-ի երեկոյան Դամասկոսի Ազգային առաջնորդարանում կարճ հանդիպում է ունեցել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Արմաշ եպս. Նալբանդյանի, Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց եկեղեցու Դամասկոսի թեմի առաջնորդ Արհ. Տ. Հովսեփ եպս. Առնաությանի, հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ Հայր Գէորգ վրդ.Պահէյանի, Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի, ՍԱՀ Ժողովրդական ժողովի պատգամավոր, ցեղասպանագետ, Դամասկոսի պետական համալսարանի դասախոս, Արաբ գրողների միության անդամ և Սիրիա-

Հայաստան բարեկամական խմբի նախագահ դոկտոր Նորա Արիսյանի հետ: Այնուհետև նշված անձանց ուղեկցությամբ Դամասկոսի Հայոց թեմի Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում հանդիպել ենք տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որին ներկա էին նաև Ազգային գավառական ժողովի ատենապետ Թագվոր Բոյաջյանը, ՍԴՀԿ Կենտրոնական վարչության փոխատենապետ դոկտոր Վազգեն Համալյանը, Դամասկոսի հայ համայնքային կազմակերպությունների, մշակութային և բարեսիրական միությունների ներկայացուցիչները, համայնքային այլ գործիչներ և դամասկոսահայեր:

- Հանդիպման սկզբում, մեր պատվիրակությանը բարի գալուստ մաղթելով, ողջունեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Արմաշ եպս. Նալբանդյանը, ով հակիրճ ներկայացրեց Դամասկոսի՝ որպես հնագույն քաղաքի և այստեղ հաստատված դամասկոսահայության պատմությունը: Սրբազան հայրն անդրադարձավ պատերազմական վերջին տարիների տխուր հետևանքներին՝ միաժամանակ ընդգծելով դամասկոսահայության հավաքական կամքը՝ պահպանելու ազգային կառույցներն ու հայության կարևոր ներկայությունը Դամասկոսում: Սրբազան հայրը նշեց նաև, որ ՀՀ անկախության 27-րդ տարեդարձն այս տարի առավել քան արժևորվեց՝ Սփյուռքի նախարարի անմիջական մասնակցությամբ:
- Իմ խոսքում ես մեծ հպարտությամբ և ուրախությամբ նշեցի, որ գտնվում եմ Դամասկոսում՝ հաստատելով, որ իմ պաշտոնավարման առաջին իսկ օրերից ինձ համար առաջնահերթություն է եղել այցելել Սիրիա և ՀՀ անկախության 27-րդ տարեդարձը նշել Սիրիայի պատմական հայ համայնքի հետ, սիրիահայության կողքին: Անդրադարձ կատարեցի ՀՀ-ում տեղի ունեցած թավշյա հեղափոխությանը, պատասխանեցի դամասկոսահայերին հուզող հարցերին՝ ընդգծելով, որ Սփյուռքի նախարարությունն արել և անելու է ամեն բան՝ օժանդակելու սիրիահայերին՝ անկախ վերջիններիս գտնվելու վայրից:
- Դամասկոսահայերից շատերն ընդգծեցին, որ, ցավոք, Սփյուռքի նախարարության պատվիրակության աշխատանքային այցը Դամասկոս չափազանց կարճ էր՝ համայնքում առկա խնդիրներին, համայնքային գործիչների հետ ծանոթանալու և համայնքի ներկայացուցիչների հետ ուղղակի շփվելու առումով:
- Հանդիպման ավարտին ներկաները միասնաբար երգեցին ՀՀ պետական օրհներգը՝ այդպես նշելով ՀՀ վերանկախացման 27-րդ տարեդարձը:

Սեպտեմբերի 21, 2018թ.

Մեկնում Դամասկոսից Հալեպ

- Վաղ առավոտյան մեր պատվիրակությունը Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի և Սիրիայի պետական անվտանգության ուժերի

ուղեկցությամբ Դամասկոսից մեկնեց Հալեպ: Հատկանշական է, որ 2011թ.-ից՝ Սիրիայում սկսված պատերազմից ի վեր, ես Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող առաջին պաշտոնյան եմ, ով մեկնել է Հալեպ:

- Հալեպ ժամանելուն պես Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի և Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս Արմեն Սարգսյանի ուղեկցությամբ, ես հանդիպում ունեցա Հալեպի նահանգապետ Հուսեյին Դիաբի հետ: Հալեպի նահանգապետը հանդիպման ընթացքում ընդգծեց մեր ազգերի միջև եղած բարեկամության կարևորությունը և շնորհակալություն հայտնեց հայ ժողովրդին և ՀՀ կառավարությանը պատերազմի ընթացքում սիրիական ժողովրդին ցուցաբերած աջակցության համար:
- Այնուհետև շրջեցի Հալեպի Նոր գյուղ հայկական թաղամասում, հանդիպեցի ու զրուցեցի այնտեղ բնակվող սիրիահայերի հետ, ծանոթացա նրանց առօրյային:
- Ավելի ուշ, Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի և Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս Արմեն Սարգսյանի ուղեկցությամբ, առանձին հանդիպում ունեցա Հալեպի հայ համայնքային կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Բերիո Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Շահան արքեպիսկոպոս Սարգիսյանը, Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Եկեղեցու Բերիո թեմի առաջնորդ Արժանապատիվ Տեր Պետրոս արքեպիսկոպոս Միրիաթյանը, Սիրիայի Հայ Ավետարանական եկեղեցիների միության նախագահ Վերապատվելի Հարություն Սելիմյանը, Հայ հեղափոխական դաշնակցության Սիրիայի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Կարապետ Յուզբաշյանը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Գերագույն մարմնի ներկայացուցիչ Ավետիս Խոշաֆյանը, Ռամկավար ազատական կուսակցության Հյուսիսային Սիրիայի Շրջանային վարչության ատենապետ Կարապետ Շուշանյանը, ՀԲԸՄ Սիրիայի Շրջանակային հանձնաժողովի, ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղի ատենապետ Ներսես Ներսոյանը, Սիրիահայ օգնության խաչի Շրջանային վարչության ատենապետուհի Հռիփ Գանանյանը, ՍԱՀ Ժողովրդական ժողովի պատգամավոր Ժիրայր Ռեհյանը, «Գանձասար» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Զարմիկ Չիլաբոշեան-Պողիկեանը, «Ռադիո Երազ» ռադիոկայանի պատասխանատու Ռուբեն Գևորգյանը:
- Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսը, բարի գալուստ մաղթելով ներկաներին, ընդգծեց, որ սիրիական տագնապի սկզբից՝ 2011 թվականից ի վեր, նման մակարդակով պետական այրերի պատվիրակություն չի ժամանել Հայաստանից Հալեպ: Սա առաջին պատվիրակությունն է, ինչը մեծ գնահատանքի է արժանի:
- Իմ հերթին ես նշեցի, որ մեծ ոգևորությամբ և հուզումնախառն ապրումներով եմ ժամանել Հալեպ: Սփյուռքի նախարարության պատվիրակության համար կրկնակի հպարտություն է այս տոնը նշել հալեպահայերի հետ միասին, Հալեպում՝ Սփյուռքի

մայր գաղութում: Իմ հիացմունքն արտահայտեցի հալեպահայության դիմադրողական ոգու, վճռականության մասին ու վստահություն հայտնեցի, որ այս համայնքը կվերականգնվի հենց այս ոգու և կամքի շնորհիվ: Ընդգծեցի նաև, որ Հալեպի հայ համայնքը մեզ համար շատ կարևոր համայնք է: Ցավոք, այն պատերազմի պատճառով բավականին նոսրացել է, սակայն մենք պետք է մեր հնարավորությունների սահմաններում անենք ամեն բան հալեպահայ համայնքի և Հայաստանում հաստատված սիրիահայերի կողքին մշտապես լինելու համար, որպեսզի վերջիններս կարողանան հաղթահարել առկա դժվարությունները: Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունը լավ հող է ստեղծել մեզ համար, որպեսզի մենք մեր հոգատարությունը ցուցաբերենք նաև Սփյուռքի հանդեպ: Ես շեշտեցի նաև, որ ՀՀ ներկա կառավարության ռազմավարությունն է վարել և՛ հայաստանակենտրոն, և՛ սփյուռքակենտրոն քաղաքականություն, որպեսզի համահայկական մեր ներուժը հնարավոր լինի օգտագործել լավագույն ձևով՝ ի նպաստ Հայաստանի և Սփյուռքի հզորացման: Եզրափակելով նկատեցի, որ հեղափոխության նպատակը միայն իշխանափոխությունը չէր, այլ ողջ համակարգի, աշխատելաոճի փոփոխությունն էր, քայլը դեպի ժողովրդավարությունը, ուր շեշտադրված պետք է լինի ժողովրդի մասնակցությունը, ժողովրդի իշխանությունը, իսկ կառավարությունը պետք է մշտապես հաշվետու լինի ժողովրդին:

- Խոսքիս ավարտին պատասխանեցի ներկաների հարցերին, խոսեցի թավշյա հեղափոխության, Սփյուռքի հետ հարաբերությունների, հայրենադարձության, Հայաստանի արտաքին քաղաքականության ուղղությունների, Սփյուռքի նախարարության առաջիկա ծրագրերի մասին:
- Հալեպահայերից շատերն ընդգծեցին, որ, ցավոք, Սփյուռքի նախարարության պատվիրակության աշխատանքային այցը Հալեպ չափազանց կարճ էր համայնքում առկա խնդիրներին, համայնքային գործիչների հետ ծանոթանալու և համայնքի ներկայացուցիչների հետ ուղղակի շփվելու համար:
- Սեպտեմբերի 21-ի երեկոյան Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի և Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս Արմեն Սարգսյանի ուղեկցությամբ Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսությունում մասնակցեցի Հայաստանի երրորդ Հանրապետության անկախության 27-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված պաշտոնական ընդունելությանը և հանդես եկա ելույթով:
- Պաշտոնական ընդունելության հրավիրյալների թվում էին Հալեպի նահանգապետ Հուսեյին Դիաբը, ԲԱԱՍ կուսակցության Հալեպի մասնաճյուղի տնօրեն Ֆադել Նաջջարը, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, Հալեպի համալսարանի ԲԱԱՍ կուսակցության քարտուղար Իբրահիմ ալ-Հադիդը, համալսարանի տնօրեն Մուստաֆա Էֆիունին, կուսակցության մասնաճյուղի անդամ Աբդուլլահ Հանիշը, քրիստոնյա թեմերի առաջնորդներ, Ժողովրդական Ժողովի

երեսփոխաններ, հասարակական-քաղաքական, գիտության և մշակույթի գործիչներ, հալեպահայ համայնքի կուսակցական կառույցների, ազգային բարեսիրական, մարզական միությունների և կազմակերպությունների ատենապետներ, սիրիական լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Հանդիսությանը մասնակցում էին հալեպահայ համայնքի շուրջ 450 ներկայացուցիչներ:

- Միջոցառումը մեկնարկեց երկու բարեկամ երկրների պետական օրհներգերի կատարմամբ: Ապա ներկաներին իր ողջույնի և շնորհավորանքի խոսքն ուղղեց Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս Արմեն Սարգսյանը: Գլխավոր հյուպատոսը նշեց երախտագիտության այն մեծ զգացումի մասին, որ տածում է հայ ժողովուրդը Սիրիայի արաբ ժողովրդի նկատմամբ:
- Շնորհակալություն հայտնելով տոնական գեղեցիկ միջոցառում կազմակերպելու և տոնախմբության ջերմ մթնոլորտ ստեղծելու համար՝ նշեցի, որ խորհրդանշական է, որ ես՝ ՀՀ սփյուռքի նախարարս, մեր պետության ծննդյան տարեդարձը տոնելու համար գտնվում եմ սփյուռքի մայր գաղութում և այս տոնը նշում եմ հալեպահայերի հետ միասին: Ես հայ ժողովրդի անունից երախտագիտությյան խոսքեր ուղղեցի Սիրիայի եղբայրական ժողովրդին, նախագահ Բաշար ալ-Ասադին և Սիրիայի կառավարությանը՝ հայ համայնքի հանդեպ ցուցաբերած մշտարթուն հոգատարության համար:
- Երեկոյի պաշտոնական հատվածի ավարտին իմ ու Հալեպի նախահանգապետ Հուսեյին Դիաբի ներկայությամբ հատվեց տոնական տորթը, և ներկաների համար կազմակերպվեց հյուրասիրություն: Տոնական միջոցառման ընթացքում գեղեցիկ կատարումներով հանդես եկավ Կոմիտասի անվան լարային քառյակը:
- Նշեմ նաև, որ Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսությունում ՀՀ անկախության 27-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված միջոցառումը բարձր գնահատականի է արժանացել սիրիական մամուլում: Տոնակատարությունը լուսաբանել են Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը, սիրիական ՍԱՆԱ պետական լրատվական գործակալությունը, սիրիական մասնավոր SamaTV-ն, սիրիացի հայտնի լրագրող Քինանա Ալուշը: Օրվա ավարտին ես հարցազրույց տվեցի նաև Բերիո Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի պաշտոնաթերթ «Գանձասար»-ին և «Ռադիո Երազ» ռադիոկայանին:
- Իմ պատվիրակության աշխատանքային այցը Սիրիա իրականություն դարձավ Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի և Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս Արմեն Սարգսյանի ջանքերի շնորհիվ: Մեր դիվանագետները պատերազմի ողջ ընթացքում ոչ մի վայրկյան չթողեցին Դամասկոսն ու Հալեպը, մինչդեռ Սիրիայում իրավիճակը դեռ լարված է:

Սեպտեմբերի 22, 2018թ.

Մեկնում Հալեպից Լիբանան

- Երեկոյան Սփյուռքի նախարարության պատվիրակությունը Հալեպից ուղևորվեց Ջդեյդա Յաբուս սահմանային անցակետ, որտեղից էլ Լիբանան՝ Այնճար:
- Լիբանանի Հանրապետությունում իմ առաջին հանդիպումները տեղի ունեցան այսպես կոչված Բեքայի հայկական օազիսում՝ հիմնականում հայաբնակ Այնճարում: Այնճարի «Ս. Զէյթլեան» սրահում ես հանդիպեցի Այնճարի քաղաքապետ Վարդգես Խոշյանի, ՀՅԴ «Կարմիր լեռ» կոմիտեի ողջ կազմի, հոգևոր հայրերի, թաղական խորհրդի և տիկնանց միության, ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճյուղի ներկայացուցիչների, ՀԲԸՄ-ի սկաուտների, Ազգային «Յառաջ-Գ. Կիլպէնկեան» վարժարանի տնօրեն Արմեն Թաշճյանի, Հայ ավետարանական երկրորդական վարժարանի տնօրեն Պատվելի Հակոբ Ագբաշարյանի, համայնքային կառույցների ներկայացուցիչների, գործարարների ու պարզապես այնճարցիների հետ:
- Ես մոտիկից ծանոթացա Այնճարի պատմությանը, կյանքին և առօրյային: Կարճ հարցուպատասխանից հետո շրջեցի Այնճարում և ծանոթացա տեղի հաստատություններին, որոնց աշխատակիցների մեծ մասը հայեր էին: Այնճարցիներից շատերն ընդգծեցին, որ, ցավոք, Սփյուռքի նախարարության պատվիրակության աշխատանքային այցն Այնճար չափազանց կարճ էր համայնքում առկա խնդիրներին, համայնքային գործիչների հետ ծանոթանալու և համայնքի ներկայացուցիչների հետ ուղղակի շփվելու համար:
- Օրվա ավարտին մեր պատվիրակությունը մեկնեց Այնճարից Բեյրութ:

Սեպտեմբերի 23, 2018թ.

- Լիբանան կատարած երկօրյա աշխատանքային այցի շրջանակներում մեր պատվիրակությունը ս.թ. սեպտեմբերի 23-ի առավոտյան հանդիպումներ ունեցավ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի, Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միության Կենտրոնական մարմնի ատենապետ, Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոսթյանի և Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց կաթողիկոս-պատրիարք Ամենապատիվ և Գերերջանիկ Տ.Տ. Գրիգոր Պետրոս Ի Կապրոյանի հետ: Մեր պատվիրակությանն ուղեկցում էին նաև Լիբանանում ՀՀ արտակարգ և լիազոր Սամվել Մկրտչյանը, հյուպատոս Լեոնիդ Աբաջյանը, դեսպանության աշխատակից Վլադիմիր Պողոսյանը:
- Նախ սեպտեմբերի 23-ի առավոտյան շրջայց կատարեցի Բիքֆայայի Սուրբ Աստվածածին վանքի տարածքում, այնուհետև այցելեցի Անթիլիասի Մայրավանք, Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարան, Հայոց ցեղասպանության հուշարձան-մատուռ, Անկախության հուշակոթող:

- Այնուհետև մեր պատվիրակությունը Լիբանանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Սամվել Մկրտչյանի և դեսպանության ներկայացուցիչների ուղեկցությամբ Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում մասնակցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցած Հանրապետական Մաղթանքին, որից հետո Նորին Սրբությունը, Վեհարանի իր գրասենյակում, ընդունեց մեր պատվիրակությանը: Ես իմ ուրախությունն ու գոհունակությունը հայտնեցի Նորին Սրբությանն Անթիլիասի Մայրավանքում մեր պատվիրակությանը հյուրընկալելու համար:
- Իր խոսքում Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Սփյուռքի ներկա վիճակը, Սփյուռքի առջև ծառացած դժվարությունները և մարտահրավերները: Հանդիպումն առիթ եղավ արծարծելու Հայաստան-Սփյուռք գործակցության, Հայաստանում անցնող ամիսներին տեղի ունեցած իրադարձություններին և ներկայումս տիրող կացությանն առնչվող հարցեր:
- Հանդիպման ավարտին, ես, որպես ՀՀ կառավարության ներկայացուցիչ, Հայաստան-Սփյուռք գործակցությունն ավելի սերտացնելու և ամրացնելու գործում իմ պատրաստակամությունն ու հանձնառությունը հայտնեցի Հայրապետին:
- Այնուհետև մեր պատվիրակությունն այցելեց Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական եկեղեցիների միության կենտրոն: Մեզ ընդունեց ՄԱՀԱԵՄ-ի Կենտրոնական մարմնի ատենապետ Վերապատվելի Փոլ Հայդոսյանը և լիբանանահայ ավետարանական տարբեր առաքելություններ ներկայացնող պատասխանատուների խումբը:
- Իր ողջույնի խոսքում Վերապատվելի Հայդոսյանը փոխանցեց ՄԱՀԱԵՄ-ի նախագահ Վերապատվելի Մկրտիչ Կարագյոզյանի բարեմաղթանքները՝ նշելով, որ վերապատվելին գտնվում է Երևանում՝ մասնակցելու Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության հարյուրամյակի ծրագրերին: Ապա նա ներկայացրեց ՄԱՀԱԵՄ-ի և ընդհանրապես Հայ ավետարանական եկեղեցիների կյանքի հոգևոր, կրթական, սոցիալական, երիտասարդական և հրատարակչական ուղղություններն ու հայանպաստ շեշտադրումները:
- Իմ խոսքում ես գոհունակություն հայտնեցի Լիբանան կատարած այցելության և գործակցության եզրերի զարգացման համար՝ միաժամանակ արժևորելով Հայ ավետարանական եկեղեցու և Հայ ավետարանչական ընկերակցության՝ տարբեր երկրներում արձանագրված աշխույժ և ազգանվեր գործունեությունը, հատկապես՝ Հայաստանում բարենպաստ առաքելությունը՝ ուղղված Հայաստանում հաստատված սիրիահայերի օժանդակությանը:
- Խորհրդակցության նյութ դարձան լիբանանահայ երիտասարդների կրթության հետ կապված հարցերը, ինքնությանը վերաբերող մարտահրավերները, ինչպես նաև

լիբանանահայության կենտրոնական դիրքը հայապահպանության և հայրենակերտման գործում:

- Կեսօրին մեր պատվիրակությանն ընդունեց Կաթողիկե Հայոց Ամենապատիվ և Գերերջանիկ Գրիգոր Պետրոս Ի կաթողիկոս-պատրիարքը: Հանդիպմանը ներկա էին Գերապայծառ հայրեր Մանուել եպս. Պաթագյանը, Գևորգ եպս. Խազումյանը և Արժանապատիվ Կարապետ քահանա Թադևոսյանը: Մոտ 45 րոպե տևած հանդիպումն առավելաբար ծանոթացման բնույթ ուներ: Ես Ամենապատիվ Հոգևոր Տիրոջը ներկայացրեցի Հայաստանի նորագույն իրադարձությունների արդյունքում ստեղծված դրական մթնոլորտը և դրական արձագանքը թե ներքին և թե արտաքին ճակատներում և հատկապես Սփյուռքում:
- Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց հատկապես Հայաստան-Սփյուռք հարաբերությունների առնչությամբ նախարարության առաջադրանքներին, նոր մոտեցումներին և հայրենադարձության խնդիրներին:
- Ամենապատիվ Հոգևոր Տերն իր հերթին վստահեցրեց, որ հայկական պետականության հզորացման, ժողովրդավարացման, սոցիալական արդարության, արդարադատության և հավասարության գործընթացին, Հայաստանի բարգավաճմանն ու հայրենաբնակ ժողովրդի բարօրությանն ի նպաստ յուրաքանչյուր նախաձեռնություն պիտի շարունակի վայելել Հայ կաթողիկե եկեղեցու և համայնքի քաջալերանքն ու զորակցությունը:
- Կեսօրից հետո Լիբանանում ՀՀ դեսպանությունում ես աշխատանքային հանդիպումներ ունեցա Լիբանանի ՀՅԴ կուսակցության ղեկավար կազմի հետ՝ Լիբանանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր, ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հակոբ Բագրատունու գլխավորությամբ (պատվիրակության կազմում էին նաև Կենտրոնական կոմիտեի անդամներ Հակոբ Հավաթյանը, Վիգեն Ավագյանը և Ջորջ Սապունճյանը), Լիբանանի ՍԴՀԿ-ի ղեկավար կազմի հետ՝ ՍԴՀԿ Լիբանանի Շրջանային վարիչ մարմնի ատենապետ Սեպուհ Կալփակյանի գլխավորությամբ (ՍԴՀԿ Կենտրոնական վարչության անդամ Ալեքսան Քեոշքերյանի ուղեկցությամբ), Լիբանանի ՌԱԿ-ի ղեկավար կազմի հետ՝ ՌԱԿ Կենտրոնական վարչության ատենադպիր, «Զարթոնք» օրաթերթի գլխավոր խմբագիր Սևակ Հակոբյանի գլխավորությամբ (ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչության պատվիրակության կազմում էին դոկտոր Հակոբ Փափազյանը, Արա Թերզյանը և Արա Գոյունյանը), ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային վարչության ղեկավար կազմի հետ՝ ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային վարչության ատենապետ Ժերար Թուֆենքճյանի գլխավորությամբ:
- ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի պատվիրակությունը ողջունեց մեր պատվիրակության անդրանիկ այցելությունը Լիբանան և ևս մեկ անգամ հաստատեց կուսակցության զորակցությունը՝ հույս հայտնելով, որ թավշյա

հեղափոխության արդյունքում վերջին ամիսներին Հայաստանում սկիզբ առած բարեփոխումները կնպաստեն ավելի արդար, ժողովրդավար և հզոր Հայաստանի կերտմանը: Պատվիրակությունը շեշտեց նաև լիբանանահայության դերը և կարևորությունը՝ Լիբանան-Հայաստան կապերի զարգացման գործում՝ իբրև երկու երկրները միմյանց կամրջող կարևոր ազդակ: Իմ խոսքում ես գնահատեցի կուսակցության տևական ջանքերը՝ համայնքը ամուր և կազմակերպ պահելու, Հայաստանով շնչելու համար: Լսեցի ներկաներին և ծանոթացա լիբանանահայության դիմագրաված ներկա մարտահրավերներին, ազգային կյանքի զանազան բնագավառներում առկա կարիքներին և Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման հնարավորություններին:

- ՍԴՀԿ Լիբանանի Շրջանային Վարիչ Մարմնի պատվիրակության հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստանին, Սփյուռքին և հայ ժողովրդին հուզող հարցերը և դրանց լուծման միջոցները:
- ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչության պատվիրակության և ՀԲԸՄ Լիբանանի շրջանակային վարչության ղեկավար կազմի հետ հանդիպումների ընթացքում քննարկեցինք Սփյուռքին և հայրենիքին հուզող հարցերը, ապագայում առավել ակտիվ գործակցության հեռանկարները:
- Երեկոյան ես հանդիպեցի Լիբանանի հայ համայնքի կրթական և մշակութային կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների, համայնքային գործիչների և լիբանանահայ գործարարների հետ: Նախ ողջույնի խոսքով հանդես եկավ Լիբանանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Սամվել Մկրտչյանը: Շնորհավորելով ներկաներին ՀՀ անկախության 27-րդ տարեդարձի առթիվ՝ նշեցի, որ եկել եմ համայնքի հետ ծանոթանալու, իմ պատկերացումներով կիսվելու, համայնքի կարիքները լսելու համար: Համայնքի կարիքների վերհանման հիման վրա հնարավոր կլինի մշակել նոր քաղաքականություն և ռազմավարություններ՝ Հայաստանի և Սփյուռքի միջև կապի առողջացման և ամրապնդման համար: Ու թեև աշխատանքային այցերը Սիրիա և Լիբանան չափազանց կարճ էին համայնքներում առկա խնդիրներին, համայնքային գործիչների հետ ծանոթանալու և համայնքի ներկայացուցիչների հետ ուղղակի շփվելու համար, այդուհանդերձ, առաջին քայլն արդեն արված է: Առաջիկայում այցելությունները և հանդիպումներն էլ ավելի շատ կլինեն: Ես ընդգծեցի լիբանանահայ համայնքի կարևորությունը, կիսվեցի Սիրիա կատարած այցիս տպավորություններով, անմիջական առանձնազրույցներ ունեցա ներկաների հետ և ծանոթացա լիբանանահայ համայնքում առկա մարտահրավերներին:
- Օրվա ավարտին հանդիպեցի Լիբանանի զբոսաշրջության նախարար Ավետիս Կիտանյանի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվեցին Հայաստանում զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրները, Հայաստանում լիբանանյան փորձի

ներդրման հնարավորությունները: Նախարար Կիտանյանն առավել մանրամասն ներկայացրեց իր ղեկավարած կառույցի գործունեությունը, կառուցվածքը, իրավասությունների շրջանակները, ինչպես նաև զբոսաշրջիկների ներգրավման, զբոսաշրջիկների առանձին խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունները: Վերջում մենք պայմանավորվեցինք առաջիկայում հանդիպել Երևանում և ավելի մանրամասն քննարկել համատեղ անելիքները և գործնական քայլերը:

Սեպտեմբերի 24, 2018թ.

- Լիբանան կատարած աշխատանքային այցի երկրորդ օրը՝ ս.թ. սեպտեմբերի 24-ի առավոտյան, մեր պատվիրակությունն այցելեց Բեյրութի Ազգային միացյալ վարժարան: Մեզ դիմավորեցին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզյանը, Ազգային վարչության անդամները և վարժարանի խորհրդի կազմի անդամները՝ դոկտոր Էլի Թաշճյանը, Նելլի Վեքիլյանը և Գրիգոր Էքմեջյանը: Մենք նախ շրջեցինք վարժարանի նորակառույց համալիրի ներսում, անցանք վարժարանի բոլոր ենթաբաժիններով, այցելեցինք դասարանները: Այնուհետև ես առանձնազրույց ունեցա Առաջնորդ Սրբազան Հոր, Ազգային վարչության անդամների և վարժարանի տնօրինության հետ: Ազգային վարչության ներկայացուցիչը հայտնեց, որ վարչության հովանու տակ գործում են հայկական չորս վարժարաններ: Ազգային առաջնորդարանի օժանդակությամբ արդեն 35 ուսանողներ իրենց բարձրագույն կրթությունն են ստանում Երևանում:
- Հանդիպման ընթացքում քննարկվեցին կրթական ծրագրերը, մանկավարժական մարտահրավերները և կրթական գործընթացի կազմակերպման հետ կապված այլ հարցեր: Ընդգծվեց կրթական ոլորտում Լիբանանի հայ համայնքի և Հայաստանի միջև կապերի ամրապնդման կարևորությունը:
- Կեսօրին մեր պատվիրակությունն այցելեց Հայաստանից դուրս գոյություն ունեցող հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Բեյրութի Հայկազյան համալսարան: Այստեղ ես հանդիպեցի համալսարանի նախագահ Վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոսթյանի, համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, «Հայկազյան» հայագիտական հանդեսի գլխավոր խմբագիր Անդրանիկ Դաքեսյանի, ինչպես նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համալսարանի և նախարարության միջև առկա համագործակցության ընդլայնմանն ուղղված հետագա անելիքները: Այնուհետև ես ելույթով հանդես եկա և հարցուպատասխանի ձևաչափով հանդիպում ունեցա Հայկազյան համալսարանի ուսանողների հետ:
- Երեկոյան մեր պատվիրակությունը Լիբանանից մեկնեց Եգիպտոս՝ Կահիրե:

Սեպտեմբերի 24, 2018թ.
Ժամանում Եգիպտոս, Կահիրե

- Երեկոյան՝ Կահիրե հասնելուն պես, հանդիպեցի Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի հետ: Սփյուռքի նախարարության պատվիրակության Եգիպտոս պաշտոնական այցելության առիթը ս.թ. սեպտեմբերի 26-ին Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի անմիջական աջակցությամբ նախաձեռնված՝ եգիպտահայերի մեծարմանը նվիրված բացառիկ ձեռնարկի իրականացումն էր, որը նպատակ ուներ խթանել երկու պետությունների միջև պատմական կապերի զարգացումը:
- Տիկին Մաքրամի հետ զրույցն ընթացավ մերձավորարևելյան տարածաշրջանի հայ համայնքներ մեր պատվիրակության վերջին այցելությունների հիմնական նպատակների, ՀՀ-ում թավշյա հեղափոխությունից հետո հայրենադարձության հեռանկարների, Հայաստան-Եգիպտոս հարաբերությունների ներկա վիճակի, երկու երկրների միջև զբոսաշրջության և այլ բնագավառներում համագործակցության ակտիվացման, Եգիպտոս-Կիպրոս-Հունաստան սփյուռքի հարցերով արդեն իսկ գոյություն ունեցող համագործակցության ձևաչափին հայաստանյան կողմի ներգրավման, քառակողմ համաձայնագրի ստորագրման, ինչպես նաև Սփյուռքի նախարարության և Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարարության միջև փոխգործակցության շրջանակների ընդլայնման շուրջ:
- Տիկին Մաքրամին տեղեկացրեցի, որ մինչ Եգիպտոս իմ առաջին պաշտոնական այցը՝ աշխատանքային այցով եղել եմ Սիրիայում, տեսել ավերված Հալեպը, Հոմսը, Դամասկոսը: Թեև Սիրիայում ականատես եղած տեսարաններից առաջացած հուզմունքը զսպելն անհնարին էր, բայց և չէր կարող չոգևորել հայ համայնքի անկոտրում ոգին: Շփվեցի միասնական, չընկճվող, անհավանական ուժեղ հայ համայնքի հետ, որը պատերազմի հետևանքով ունեցավ մեծաթիվ մարդկային և նյութական կորուստներ, բախվեց մարդասիրական և տնտեսական լուրջ դժվարությունների հետ, սակայն հայ մնաց: Այնուհետև աշխատանքային այցով մեր պատվիրակությունն այցելեց Լիբանան, որտեղ հանդիպումներ ունեցա հայ համայնքի տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ: Չեմ կարող չփաստել, որ մայրիների այդ գեղեցիկ երկրում հաստատված մեր համայնքն իսկապես հզոր է:
- Այնուհետև տիկին Մաքրամի հետ միասին հարցազրույց տվեցինք (անգլերենով) Եգիպտոսի DMC առաջատար հեռուստաալիքի հանրահայտ լրագրող Ուսամա Քամելին՝ պատասխանելով Սիրիա մեկնելու նպատակների, իմ եգիպտացի գործընկերոջ հետ համագործակցության հնարավորությունների, պատկերացումների, հետհեղափոխական Հայաստանում ստեղծված իրավիճակի և զբոսաշրջության զարգացման հեռանկարների վերաբերյալ տարատեսակ հարցերի:

Միաժամանակ խոսեցի հայկական և եգիպտական Սփյուռքներից, Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից, անդրադարձա Հայոց ցեղասպանության և այլ թեմաների:

Սեպտեմբերի 25, 2018թ.

- Եգիպտոսի Արաբական Հանրապետություն կատարած առաջին պաշտոնական այցի շրջանակներում մեր պատվիրակությանն ընդունեց Եգիպտոսի Արաբական Հանրապետության վարչապետ Մուստաֆա Մադբուլին: Հանդիպմանը մասնակցեցին նաև Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամը և Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մելքոնյանը:
- Եգիպտոսի վարչապետի հետ հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց հայ-եգիպտական հարաբերություններին, Եգիպտոսի մշակութային և սոցիալ-տնտեսական կյանքում տեղի հայ համայնքի ունեցած դերակատարությանը: ՀՀ կառավարության անունից գնահատանքի խոսք փոխանցեցի Եգիպտոսի բարեկամ ժողովրդին և պետությանը, որը Հայոց ցեղասպանության տարիներին հազարավոր հայերի փրկություն և ապաստան է տվել: Հանդիպման ավարտին երկուստեք կարևորվեց նաև մեր երկրների՝ Սփյուռքի հետ աշխատանքները կարգավորող պատասխանատու գերատեսչությունների միջև համագործակցության խորացումը:
- Եգիպտոսի կառավարության պաշտոնական կայքէջը, անդրադառնալով վարչապետ Մուստաֆա Մադբուլիի և իմ հանդիպմանը, մասնավորապես շեշտադրել է երկու երկրների հարաբերությունների ամրապնդման և համագործակցության հեռանկարները:
- Այնուհետև կեսօրին մեր պատվիրակությունը Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի և Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մելքոնյանի ուղեկցությամբ այցելեց Կահիրեի Հայոց թեմի առաջնորդարան, որտեղ պատվիրակությանը դիմավորեցին Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ եպ. Մնացականյանը և Կահիրեի հայ համայնքի ներկայացուցիչները: Հոգևոր հոր ուղեկցությամբ նախարարները շրջայց կատարեցին առաջնորդարանի տարածքում, ծանոթացան դրա պատմությանը և ճարտարապետական ոճի առանձնահատկություններին:
- Երեկոյան Կահիրեի «Պըլըքտանյան» սրահում հանդիպում ունեցա Կահիրեի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էին Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մելքոնյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ եպ. Մնացականյանը, Քաղաքական ժողովի ատենապետ Վահե Փլադյանը, Կահիրեի Հայ դատի պատասխանատու Արմեն Մազլումյանը, Կահիրեի թեմական, քաղաքական ժողովների անդամ Պերճ Հալաճանը և այլք:

Խոսեցի Հայաստան-Սփյուռք փոխգործակցության առավել գործնական քայլերի մասին, կիսվեցի իմ տեսլականով՝ ընդգծելով առանձին համայնքների հետ սեփական օրակարգով աշխատելու հանգամանքը, լսեցի եգիպտահայ մեր հայրենակիցների կարծիքները և պատասխանեցի նրանց հուզող հարցերին:

Սեպտեմբերի 26, 2018թ.

- Երեկոյան Կահիրեի օպերային թատրոնում մասնակցեցի Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի անմիջական աջակցությամբ նախաձեռնված՝ հայկական Սփյուռքի ամենահին համայնքներից մեկի՝ եգիպտահայ համայնքի մեծարմանը նվիրված բացառիկ միջոցառմանը:
- Միջոցառման ընթացքում հանդես եկա ելույթով, ողջունեցի մեր եգիպտահայ հայրենակիցներին, այնուհետև հետևեցի Կահիրեի «Արաքս» երգչախմբի, «Սարդարապատ» և «Զանգեզուր» պարախմբերի հայկական և եգիպտական ժողովրդական կատարումներին:
- Հատկանշական է նաև, որ հյուրերի թվում բացի հայ համայնքի ներկայացուցիչներից, ներկա էին մի քանի տասնյակ արտասահմանցիներ՝ դեսպաններ, հյուպատոսներ, եգիպտացի բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական ու մշակութային գործիչներ:

Սեպտեմբերի 27, 2018թ.

- Կեսօրին մեր պատվիրակությունը Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Մելքոնյանի և Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի ուղեկցությամբ այցելեց Ալեքսանդրիայի «Ռաըս էլ Թին» ծովային ուժերի կայան: Հանդիպում ունեցա Եգիպտոսի ռազմածովային ուժերի հրամանատարի և Ալեքսանդրիայի քաղաքապետ Դոկտոր Աբդ Էլ Ազիզ Քոնսոուի հետ: Այնուհետև մեր պատվիրակությունը ծանոթացավ Եգիպտոսի ռազմածովային ուժերի վերջին տարիների զարգացումներին և արդիականացման աշխատանքերին, այցելեցինք ռազմական օդանավերի կայանատեղի:
- Այնուհետև մեր պատվիրակությունը Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամի, Եգիպտոսում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի, Ալեքսանդրիայի քաղաքապետի, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդի, Կահիրեի Հայ դատի պատասխանատուի ուղեկցությամբ, մասնակցեց Եգիպտոսի Հայոց Առաջնորդարանի և հայ համայնքի ներկայացուցիչների կողմից Ալեքսանդրիայի «Միրի» հիվանդանոցին 1 մլն. եգիպտական ֆունտի նվիրատվության հանձնման արարողությանը, իսկ օրվա ավարտին Ալեքսանդրիայի առաջնորդարանում մեր պատվիրակությունը հանդիպեց Ալեքսանդրիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Սեպտեմբերի 28, 2018թ.

- Բրիտանական BBC-ն անդրադարձավ մեր պատվիրակության պաշտոնական այցին Եգիպտոս:
- Եգիպտոս պաշտանական այցի վերջին օրը՝ Հայաստան մեկնելուց առաջ, հանդիպեցի Եգիպտոսի հունական համայնքի ղեկավար Քրիստոս Կավալլիսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկեցինք Եգիպտոսում հայ և հույն համայնքների համագործակցության հնարավորությունները, համայնքների առջև ծառացած մարտահրավերները, խնդիրները, որոնք իրականում գրեթե նույնն են: Քննարկման արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ այս հարցում ևս հայերն ու հույները՝ որպես եղբայրական ժողովուրդներ, պետք է ավելի ակտիվացնեն միջհամայնքային կապերը, երկկողմ համագործակցությանը նոր շունչ հաղորդեն և, մեկմեկու աջակցելով, լուծեն բոլոր խնդիրները: Պարոն Կավալլիսն ընդգծեց, որ հույները փորձում են իրենց երիտասարդությանը պահել Եգիպտոսում՝ վերջիններիս համար աշխատատեղեր բացելով և էժան գներով բնակարաններ տրամադրելով:
- Կեսգիշերին մեր պատվիրակությունը վերադարձավ Երևան:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Նախաձեռնել ուսուցիչների (այդ թվում մանկավարժական մեթոդաբանության գծով) վերապատրաստման առցանց ծրագիր,
- Արևմտահայերենով պատրաստված մուլտֆիլմերը տեղայնացնել համայնքներում,
- Աշխատանքներ տանել համապատասխան կրթական ծրագրերով և մանկավարժական մեթոդաբանությամբ Լիբանանի Ազգային վարժարաններին աջակցելու համար,
- Հեռակոնֆերանսներ կազմակերպել Սփյուռքի նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց և եգիպտահայ երիտասարդության հետ,
- Զբոսաշրջության ոլորտում լիբանանյան փորձի՝ Հայաստանում ներդրման հնարավորությունների շուրջ համատեղ անելիքների և գործնական քայլերի նախանշում,
- Եգիպտոսի ներգաղթի և եգիպտացի արտագաղթածների նախարար Նաբիլա Մաքրամը ս.թ. հոկտեմբերի 15-16-ին Հայաստանում կմասնակցի Հայաստան-Կիպրոս-Հունաստան-Եգիպտոս քառակողմ հանդիպմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Աշխուժացնել փոխգործակցության ոլորտները Սիրիայի, Լիբանանի և Եգիպտոսի հայ համայնքների հետ՝ հնարավորության դեպքում տարվա ընթացքում շատացնելով տարբեր մակարդակի փոխայցելությունների և հանդիպումների առիթները,
- Հայաստանում հաստատված և հաջողություններ գրանցած սփյուռքահայ անհատների մասին հաղորդումների պատրաստում, հարցազրույցների կազմակերպում, դրանց տարածում համայնքներում,
- Տարվա ընթացքում նախաձեռնել ուսուցիչների (այդ թվում մանկավարժական մեթոդաբանության գծով) վերապատրաստման առցանց ծրագիր,
- Հայաստանի ԲՈՒՀ-երում անվճար ուսանելու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված աշխատանքների իրականացում սփյուռքահայ երիտասարդների համար՝ հատկապես բնագիտական առարկաների գծով,
- Զբոսաշրջության ոլորտում լիբանանյան փորձի ուսումնասիրություն և Հայաստանում դրա ներդրման հնարավորությունների քննարկում ոլորտի պատասխանատու կառույցների հետ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

04.10.2018թ.